ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

12-դասարան

Ա: Աշխատանք բնագրով: (15 միավոր)

Մարտ ամիսն էր: Հարսանիքն արեցին Անիում.վաղորդայնից ողողանջում էին կոչնակները:Գինարբուքի էին պատրաստվել նաև պանդոկներն ու գինետները:Արքան կամեցել էր՝ այդ օրն ուրախանային ծեր թե մանուկ, պատրիկ թե ընչազուրկ:Դժվար էր մոտենալ դարպասին, որը զարդարված էր կիպարիսի դրասանգներով: Բուրվառներում ծխում էր կնդրուկը: Վառվեցին հազարամոմ աշտանակները: Պալատի հարթ ձեղունի վրա համադամ ուտեստներով ու ըմպելիքներով զարդարված մի մեծ սեղան էր սպասում հյուրերին: Պալատական սպասավորներն ու խահարարները , միմյանց հրմշտելով , սեղաններն էին զարդարում:Մատռվակները մառաններից տիկեր ու տակառներ էին բարձրացնում՝ զովացուցիչ ըմպելիքներով և օշարակներով: Կենտրոնում՝ արծաթյա մեծ մատուցարանի մեջ, ոչխարի ու պախրայի գլուխներ էին դրված,տապակած խոճկորներ: Հյուրերին ընդառաջ եկավ Կիլիկիո արքան՝ Հեթումը՝ օգոստոսափառ հայրը՝ ընչացքը ամբոջովին ճերմակած: Հայրական համբույր դրոշմելով հարսի ու որդու ճակատին՝ խաչակնքեց և իր կամքն արտահայտելու համար բացականչեց. «Կարթագենը պետք է կործանվի»:

1. Գրե՛ք՝ որտեղից է առաջացել **մարտ** ամսանունը .տվե՛ք ծագման մեկնաբանությունը:**(2 միավոր)**

2. Գրե՛ք **Անի** քաղաքին վերաբերող առնվազն երկու շրջասություն: **(1միավոր)**

3.Նշե՛ք՝ որտեղից է ծագում **«Կարթագենը պետք է կործանվի»** արտահայտությունը,և երբ է այն կիրառվում: **(2միավոր)**

4. **Գինարբուք, պատրիկ, դրասանգ, բուրվառ,նոճի,ձեղուն** բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ բառ: **(2միավոր)**

5.Տեքստում որո՞նք են **մոմակալ, խորտիկ, կխտար, բեղ, դաջել,խունկ** բառերի հոմանիշները: **(2միավոր)**

6. Բառակապակցությամբ բացատրե՛ք **մատռվակ, տիկ, կոչնակ, օշարակ** բառերի իմաստները: **(1միավոր)**

7. Նշե՛ք **ընչազուրկ, ըմպելիք, ընչացք** բառերում կատարված հնչունափոխությունները և գրե՛ք անհնչունափոխ արմատները: Նշե՛ք՝ **դունչ** բառում նշվածներից որ արմատն է առկա, և ինչ հնչունափոխություն կա այս բառում: **(2միավոր)**

8. Դո՛ւրս գրեք երկուական բառակապակցություն, որոնց բաղադրիչները կապված լինեն համաձայնությամբ, խնդրառությամբ և առդրությամբ: **(2 միավոր)**

9.Գրե՛ք **արքա** բաղադրիչով բաղադրված առնվազն երկուական հատուկ և հասարակ գոյականներ: **(1 միավոր)**

Բ. Շարադրություն՝ «Ի՞նչ են պատմում հուշարձանները» վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Խալաթյան